նելիս, Սաքլել Վ. եւ Ս., Վանտա, Բիրի-կաքի, Վել, Սափոր կամ Սապար[1] Վ. եւ Ն. եւ Սամջելի գեղերը։ Խանթուշէտ առուակը իջնում է Սամսուլիատ եւ ակ-լճից եւ Կրաչ-թէփէ լ-ից բազմաթիւ առուներով, ոռոգում է Խանթուշէտ, Զարտուլէտ, Մոալա-կոշմիտ, Կվատետրիս, Ցիցխլաուր, Մամ-պալար, Զինտորա եւ Գուրբանել գեղերը, մացրանները, ախոռները, եայլաները ու աւե-րակները։ Կորխու լեռներից իջնում է Ցոր-ցել առուակը, որ ոռոգում է Համանուն, Սատապլիա, Կոլշատլ, Մոխրորոզ, Ջիֆտ-լիկ, Վերխնա, Ջարաք եւ Անկլիս գեղերը, հանդերը, ախոռները, մացրանները եւ եայ-լաները։ Մոխրբինի առուակը ոռոգում է

---

1 Սապոր Վ. եւ Ն. երկու գիւղակներ են, ուր մահ-մեդականներ են ապրում եւ սովորականից տարբեր ցեղի են պատկանում։ Սրանք Թուրքման Ռ.լի-ալլահիներ են, գուցէ եւ գեաբրեր (մոխրապաշտներ). չեն խնամիանում չրջակայ ժողովուրդների հետ, իրենք էլ սպառուելու վրայ են։ Սապոր Շապուր կամ Շապ՝ոու անունը կասկածներ է ծնեցնում այցելուին եւ կարծիքներ զարթեցնում։ Շաւ-չէտի խալամացածները Թուրքերէն են խօսում. թէեւ սա-ռի այն կողմը, Խմերխեւում մուսուլմաններն ընդհանրա-պէս վրացական դաւառաբարբառով են խօսում եւ խիստ չեզոք դիրք ունին Շաւշէտի Թուրքացածների հետ, որոնք նախկին Հայեր են։ Ամբողջ Խմերխեւում մէկին չէր գտնի, որ Թուրքերէն խօսել իմանայ՝ մայրենի լեզուն երեխայի համար վրացերէնն է։ Իսկ Խմերխեւցի տղամարդիկ հազիւ կարողանում են Թուրքերէն իրենց միտքը արտայայտել։ Շաւշէտի Թրքացածները կին թէ այր Թրքախօս են. թէեւ լեզուի ոճի մէջ մնանում են եւ Հայ բառեր են գործա-ծում։ Շաւշէտի Թրքանալը 1578 թ. Լալա-փաշայի չըր-ջանն է։